

ՀՀ ԿԱ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ N 33/3

ք.Երևան

15 հունիսի 2018թ.

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ՝ նաև՝ Հանձնաժողով), քննության առնելով ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության պետի 18.03.2018թ. N367349/08 որոշման դեմ «ԱՐՏԴԵՏԱԼ» ՍՊԸ տնօրենի ներկայացուցչի դիմում-բողոքը՝

ՊԱՐԶԵՑ

«ԱՐՏԴԵՏԱԼ» ՍՊԸ տնօրենի ներկայացուցչի կողմից դիմում-բողոք է բերվել ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության պետի 18.03.2018թ. N367349/08 որոշման դեմ, որով կիրառվել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169⁵-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պատասխանատվության միջոցը:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 288-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի որոշման դեմ գանգատ կարող է տրվել որոշումը նույն օրենսգրքի 283-րդ հոդվածով սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) օրվանից հետո՝ երեսուն օրվա ընթացքում:

ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության պետի 18.03.2018թ. N367349/08 որոշումը կողմը ստացել է 30.04.2018թ., սակայն դրա դեմ բողոքը տրվել է 05.06.2018թ.՝ վերոգրյալ իրավանորմով նախատեսված երեսուն օրյա ժամկետի խախտմամբ:

ՀՀ հարկային օրենսգրքի 442-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետի համաձայն՝ հարկային մարմնի բողոքարկման հանձնաժողովն ընդունում է հարկ վճարողի դիմում-բողոքի քննարկման վարույթը կարճելու մասին համապատասխան գրավոր որոշում, եթե դիմում-բողոքը ներկայացվել է Օրենսգրքի 441-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված ժամկետի ավարտից հետո:

Իր հերթին, ՀՀ հարկային օրենսգրքի 440-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ հարկային մարմնի պաշտոնատար անձանց այն գործողությունների բողոքարկումը, որոնք կապված են վարչական պատասխանատվության կիրառման հետ, կատարվում է վարչական իրավախախտումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

Քննարկվող դեպքում բողոքաբերի կողմից բաց է թողնվել վերը նշված որոշումը վարչական կարգով բողոքարկելու ժամկետը:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 20-րդ բաժնով, «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, Հանձնաժողովը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

«ԱՐՏԴԵՏԱԼ» ՍՊԸ տնօրենի ներկայացուցչի դիմում-բողոքի քննարկման վարույթը կարճել: Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝

Դ.ԱՆԱՆՅԱՆ

